



հասցե՝ Երևան, Արշակունյաց 2ա, 5-րդ հարկ
հեռ.՝ (010) 52-04-52, (098) 20-48-98, email՝ orranv@mail.ru

adress. Yerevan, Arshakunyac ave. 2a, 5 floor
tel. (010) 52-04-52, (098) 20-48-98, e-mail. orranv@mail.ru

29 Մարտի 2019

N 370/2019

«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամ

Հաշվետվություն ՊԳ/Գ /2019
**/ ավտոմեքենաների/
ԳՆԱՀԱՏՄԱՆ**

Սեփականատեր՝ *«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամ*
Պատվիրատու՝ *«Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամ*

ԵՐԵՎԱՆ 2019

1. Գնահատման առարկան

Սույն եզրակացության գնահատման առարկաներն են «Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամին պատկանող VAZ 21213 և PAZ 3205 մակնիշի ավտոմեքենաները:

2. Գնահատման նպատակը

Գնահատման նպատակը դիտարկվող շարժական գույքի շուկայական արժեքի որոշումն է:

Սույն հաշվետվության մեջ «շուկայական արժեք» հասկացությունը մեկնաբանվում է, որպես հաշվարկային մեծություն, որը իրենից ներկայացնում է շարժական գույքի օտարման ամենահավանական գինը ազատ մրցակցային շուկայում, գնահատման օրվա դրությամբ, երբ գործարքի կողմերը իրազեկ են, հաշվենկատ և գործում են խելամիտ, խոհեմաբար, առանց հարկադրանքի, այսինքն.

- գործարքի կողմերից մեկը պարտավորված չէ օտարելու գնահատվող գույքը, իսկ մյուսը՝ գնելու,
- կողմերը լավ տեղեկացված են գործարքի առարկայից և գործում են սեփական շահերից ելնելով,
- գույքը օտարվում է խելամիտ ժամանակահատվածում, որը ապահովում է վերջինիս հասանելիությունը պոտենցիալ գնորդների մեծամասնությանը,
- շուկան մրցակցային է, որտեղ առկա է շարժական գույքի բավարար ընտրություն, մեծաքանակ գնորդների և վաճառողների միջև գործարքների իրականացման համար,
- գործարքի գինը իրենից ներկայացնում է դրամով արտահայտված գնահատվող առարկայի փոխհատուցման չափը, երբ փոխադարձ զիջումներ և զեղչեր կողմերը չեն իրականացրել:

Գնահատման արդյունքները անհրաժեշտ են դիտարկվող շարժական գույքը օտարելու արժեք որոշելու համար:

3. Գնահատվող առարկայի իրավական փաթեթը

Համաձայն տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի մեքենաները պատկանում են «Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամին՝ Երևան Կենտրոն Ա.Մանուկյան 1 ;

REGISTRATION NUMBER	266 OM 61	CHASSIS NUMBER	X1M3205QR10002585
MARK	PAZ	ENGINE NUMBER	
TYPE	3205	CHASSIS NUMBER	10002585
VEHICLE CATEGORY	ԿԱՑՈՐՈՒ	ENGINE POWER (KW)	85/115
VEHICLE BODY TYPE	ԿԱԳՈՆ	PERMISSIBLE MAXIMUM WEIGHT (KG)	0
VEHICLE BODY TYPE	WAGON	NET WEIGHT (KG)	0
COLOR	ՍՊԻՏԱԿ-ԿԱՐՄԻՐ ԳՆԵՐՈՎ	YEAR OF ISSUE	2001
	WHITE - WITH RED LINES		

REGISTRATION NUMBER	437 OM 61	CHASSIS NUMBER	XTA212100J0636914
MARK	VAZ	ENGINE NUMBER	
TYPE	21213	CHASSIS NUMBER	636914
VEHICLE CATEGORY	ԹԵԹԵՎ ՍԱՐԴԱՏԱՐ	ENGINE POWER (KW)	59/80
VEHICLE BODY TYPE	PASSENGER	PERMISSIBLE MAXIMUM WEIGHT (KG)	1550
VEHICLE BODY TYPE	ՈՒՆԻՎԵՐՍԱԼ	NET WEIGHT (KG)	1150
COLOR	ՍՊԻՏԱԿ	YEAR OF ISSUE	1988
	WHITE		

4. Գնահատման ժամանակահատվածը

Տեղազնման աշխատանքները կատարվել են՝ 15.03.2019թ.
Գնահատման աշխատանքները կատարվել են՝ 25.03.2019թ.

Օրրան՝ ՍՊՐ 2019 

5. Գնահատման գործընթացը

Գնահատման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից.

- Շարժական գույքի մասնագիտական տեղազննում և լուսանկարում
- Գնահատման առարկայի փաստաթղթերի ուսումնասիրում
- Անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում՝ համապատասխան մասնագետների հետ հարցազրույցների միջոցով
- Գնահատման անհրաժեշտ մեթոդների հիմնավորում և կիրառում
- Շուկայական գնահատման եզրակացության կազմում:

6. Գնահատվող առարկայի համառոտ բնութագիրը

Ինչպես վերը նշվեց, գնահատվում է պատվիրատուի կողմից ներկայացված «VAZ21213» մակնիշի մարդատար ավտոմեքենան: Դիտարկվող տրանսպորտային միջոցը տեղազննման ժամանակ անսարք էր և գտնվում էր շահագործման համար ոչ պիտանի վիճակում:

Ստորև ներկայացված է գնահատվող տրանսպորտային միջոցը, տեխնիկական անձնագրի տվյալները, տեխնիկական վիճակի վերաբերյալ համառոտ տվյալները և լուսանկար(ներ)ը.

N	Տրանսպորտային միջոցների անվանումը	Լուսանկար	Տեխ. վիճակ
1	2	3	4

<p>1. Մակնիշը. « VAZ21213»</p> <p>Գույնը` Սպիտակ</p> <p>SU տեսակը. Թեթև մարդատար</p> <p>Թափքի տեսակը. Կուլպե</p> <p>Տարեթիվը. 1988թ.</p> <p>Վազքը` 321.616կմ</p> <p>Շարժիչի համարը. *****</p> <p>Շարժիչի հզորությունը (ԿՎՏ/ՁՈՒ) 59/80</p> <p>Թափքի համարը` - 636914</p> <p>Նույնացման համարը (vin)` XTA212100J0636914</p> <p>Գրանցման համարանիշը. 437OM61</p> <p>Քանակը. մեկ հատ</p>	     	<p>Շարժիչը և հիմնական մասերը գտնվում են բավ վիճակում, անվադողերը` բացակայում են անվահեծերը` բացակայում են</p> <p>փոխանցման տուփը` մեխանիկական ապակիները Մեքենան ենթակա չէ շահագործման:</p> <p>Տրանսպորտային միջոցը տեխնիկական վիճակի զննհատման վեց աստիճան (0-5) սանդղակում համապատասխանում է առաջին աստիճանին</p> <p>ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄՆԵՐ վերասարքավորվել է 212-ից</p>
--	---	---

N	Տրանսպորտային միջոցների անվանումը	Լուսանկար	Տեխ. վիճակ
1	2	3	4

<p>1. Մակնիշը. « PAZ 3205»</p> <p>Գույնը` Սպիտակ կարմիր բծերով</p> <p>SU տեսակը. ԱՎՏՈՒՐՈՒՄ</p> <p>Թափքի տեսակը. ՎԱԳՈՆ</p> <p>Տարեթիվը. 2001թ.</p> <p>Վազքը` 75.333կմ</p> <p>Շարժիչի համարը. *****</p> <p>Շարժիչի հզորությունը (ԿՎՏ/ՉՈՒ) 85/115</p> <p>Թափքի համարը` - 100002585 Նույնացման համարը (vin)` X1M32050R10002585</p> <p>Գրանցման համարանիշը. 266OM61</p> <p>Քանակը. մեկ հատ</p>	   	<p>Շարժիչը և հիմնական մասերը գտնվում են բավ վիճակում, անվաղողերը` բավարար անվահեծերը` ժանգոտված</p> <p>փոխանցման տուփը` մեխանիկական ապակիները նորմալ</p> <p>Մեքենան ենթակա է շահագործման:</p> <p>Տրանսպորտային միջոցը տեխնիկական վիճակի գնահատման վեց աստիճան (0-5) սանդղակում համապատասխանում է առաջին աստիճանին</p> <p>ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄՆԵՐ 24 նստատեղ</p>
---	---	--

7. Գույքի գնահատման մեթոդների համառոտ նկարագրությունը

Գույքի գնահատման համար ընդունված են և կիրառելի հետևյալ մեթոդները` ծախսային, համեմատական և եկամտային: Նշված երեք մեթոդներն էլ հիմնված են շուկայական տվյալների վերլուծության վրա:

7.1 Ծախսային մեթոդ

Այս մեթոդը հիմնված է գնահատվող գույքի ստեղծման և իրացման հետ կապված ծախսերի (վերականգնողական արժեքի) հաշվարկի արդյունքների վրա: Սա ակնկալում է նաև գնահատվող միավորների մաշվածության հաշվարկը, որը բաղկացած է ֆիզիկական, գործառության (բարոյական) և տնտեսական (արտաքին) բաղադրիչներից:

Գնահատվող գույքի վերականգնողական արժեքի հաշվարկման համար կիրառվում են հետևյալ մեթոդները.

- Նմանատիպ գույքի գնի որոշման մեթոդ
- Ըստ տարրերի հաշվարկման մեթոդ
- Ծախսերի վերլուծության և ինդեքսացիայի մեթոդ
- Խոշորացված նորմատիվներով հաշվարկման մեթոդ:

Ֆիզիկական մաշվածություն (U₁)

Ֆիզիկական մաշվածությունը գնահատվող առարկաների սպառողական հատկությունների նվազումն է՝ ելնելով նրանց շահագործման և պահպանման ժամանակահատվածից:

Ֆիզիկական մաշվածության հաշվարկի համար գոյություն ունեն հետևյալ մեթոդները.

1. Փորձագիտական
 - Արդյունավետ տարիքի մեթոդ
 - Վիճակի փորձաքննության մեթոդ
2. Տնտեսա-վիճակագրական
 - Եկամուտների իջեցման մեթոդ
 - Վերանորոգման փուլերի պարբերականության մեթոդ
3. Փորձարարական-վերլուծական
 - Սպառողական արժեքի իջեցման մեթոդ
 - Ուղղակի մեթոդ:

Գործառութային մաշվածություն (U₂)

Ծախսային մեթոդով հաշվարկի հաջորդ փուլը գործառութային մաշվածության հաշվարկն է: Գործառութային մաշվածությունը պայմանավորված է տվյալ բնագավառում գիտատեխնիկական առաջընթացով, նոր նյութերի և տարրերի բազայի վրա կառուցված ժամանակակից պահանջներին բավարարող հիմնական միջոցների արտադրությամբ: Այս տիպի մաշվածքը լինում է երկու տեսակի.

- Տեխնոլոգիական, որը պայմանավորված է արտադրության տեխնոլոգիայի փոփոխման, արտադրության ժամանակակից պահանջներից ելնելով մեքենաների օպտիմալ տեղաբաշխման անհնարինության, ավելորդ հզորությունների առկայության հետևանքով կատարվող ավելորդ կապիտալ ծախսումներով
- Օպերացիոն, որը պայմանավորված է շահագործման ծախսերի մեծացմամբ

$$U_2 = (1 - (U / U_1)^n) \times 100\% , \text{ որտեղ}$$

U - իրական արտադրողականությունն է,

U₁ - հաշվարկային (անձնագրային) արտադրողականությունն է,

n - «գների արգելակման» գործակիցն է,

Ցանկացած հին տեխնիկայի պարամետրերի տարբերությունը նորի հետ շուկայում առաջ է բերում հին տեխնիկայի նկատմամբ գրավչության փոքրացում, արժեզրկում և հետևաբար նրա գործառութային մաշվածություն:

Տնտեսական մաշվածություն (U₃)

Տնտեսական կամ արտաքին մաշվածությունը գույքի արժեզրկումն է արտաքին գործոնների ազդեցության հիման վրա: Դա կարող է լինել ինչպես ընդհանուր տնտեսական անկման, այնպես էլ արտադրության ճյուղային կառուցվածքում արմատական փոփոխությունների պատճառով: Հիմնական պատճառը, որը մեր կարծիքով, առաջ է բերում գույքի շոշափելի տնտեսական մաշվածություն, դա հետևանք է հանրապետության սպառման շուկաների սակավությանը:

Գնահատվող գույքի շուկայական արժեքի հաշվարկման համար կիրառվում է շուկայական գնահատման հետևյալ բանաձևը.

$$U_3 = U_4 - (U_1 + U_2 + U_3) ,$$

որտեղ

U₄ - վերականգնողական արժեքն է,

U₁ - գույքի ֆիզիկական մաշվածությունը,

U₂ - գույքի գործառութային մաշվածությունը,

U₃ - արտաքին ազդեցության մաշվածությունը:

7.2 Համեմատական (շուկայական) մեթոդ

Այս մեթոդը սովորաբար օգտագործվում է երկրորդական շուկա ունեցող տրանսպորտային միջոցների գնահատման համար: Նրա հիմնական սկզբունքը համեմատությունն է:

- երկրորդական շուկայում վաճառված կամ վաճառվող ճշգրիտ նմանակի հետ (իրականացված գործարքների գները),
- երկրորդական շուկայում վաճառված կամ վաճառվող մոտավոր նմանակի հետ, ներառելով տարբերության շտկումը,
- միանգամայն նոր համադրելի առարկայի արժեքի հետ, ներառելով մաշվածության շտկումը (երկրորդային շուկայում նմանակի բացակայության դեպքում):

Այդ մեթոդի կիրառման համար անհրաժեշտ են հետևյալ տվյալները.

1. Հայտնի իրական վաճառքներ,
2. Արտադրողների ապրանքների գնացուցակները,
3. Առաջարկի և պահանջարկի գների վերաբերյալ բանավոր և գրավոր տվյալներ,
4. Գների ինդեքս:

7.3 Եկամուտների կապիտալիզացիայի մեթոդ

Այս մեթոդի կիրառումը հիմնվում է գնահատվող գույքի վարձակալումից սպասվող եկամուտների հոսքի որոշման և նրա հետագա կապիտալիզացիայի հիման վրա:

8. Գնահատվող գույքի շուկայական արժեքի հաշվարկման համար մեթոդի (կամ մեթոդների) ընտրությունը

8.1 Ծախսային մեթոդ

Գնահատվող տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ ելակետային տեղեկատվության բացակայությունը (վերականգնողական արժեքի որոշման համար անհրաժեշտ են գործարանային բավական ստույգ տվյալներ, որոնց մեք չենք տիրապետում, իսկ նշված մակնիշների մի մասը ընդհանրապես արտադրությունից դուրս են եկել) հնարավորություն չի տալիս տվյալ դեպքում կիրառել գնահատման ծախսային մեթոդը, ուստի մենք գտնում ենք, որ ծախսային մեթոդի կիրառումը գնահատվող առարկայի շուկայական արժեքի հաշվարկման համար տվյալ դեպքում չի տա իրատեսական արդյունք:

8.2 Համեմատական մեթոդ

Գնահատման համեմատական մեթոդի կիրառումը, ինչպես վերը նշվեց, պիտանի է միայն երկրորդային շուկա ունեցող հիմնական միջոցների գնահատման համար: Տվյալ դեպքում, գնահատվող առարկայի համար երկրորդային շուկա գոյություն ունի, հետևաբար, այս մեթոդի կիրառումը վերջինիս շուկայական արժեքը հաշվարկելու համար, մեր կարծիքով, հիմնավորված է և կտա իրատեսական արդյունք:

8.3 Եկամտային մեթոդ

Եկամտային մեթոդի կիրառման համար, ինչպես վերը նշվեց, անհրաժեշտ է ակնկալվելիք եկամուտների բավականին ստույգ և որոշակի ժամանակահատվածի վերաբերյալ տվյալներ: Քանի որ, գնահատման առարկա հանդիսացող գույքի շահագործումից սպասվող եկամուտների հաշվարկման համար բավարար ճշգրտված ելակետային տվյալների մենք չենք տիրապետում, ուստի գտնում ենք, որ եկամտային մեթոդի կիրառումը վերջիններիս շուկայական արժեքի հաշվարկման համար, տվյալ դեպքում հիմնավորված չէ:

9. Գույքի շուկայական արժեքի համառոտ հաշվարկ

Գնահատման ժամանակ կիրառվել է այն սկզբունքը, երբ շուկայական արժեքը որոշվում է գնահատվող գույքը համեմատելով երկրորդային շուկայում վաճառված կամ վաճառվող մոտավոր

նմանակների հետ, ներառվել է տարբերության շտկումները կախված նրանց վիճակից և տեսակից: Համեմատական նմանակները ընտրվել են հաշվի առնելով վերջիններիս համադրելիությունը գնահատվող տրանսպորտային միջոցների: Այսպես, տրանսպորտային միջոցների արժեքը որոշելիս հաշվի է առնվել նրանց տեխնիկական վիճակը, արտադրման տարեթիվը, շարժիչի հզորությունը, անվադողների և մյուս հիմնական մասերի տեխնիկական վիճակը, որոնք ուղղակի կերպով ազդում են վերջիններիս շուկայական արժեքի ձևավորմանը:

Ընդհանուր առմամբ գնահատվող գույքի շուկայական արժեքը որոշվել է կիրառելով հետևյալ բանաձևը.

$$Q_{\text{ԸԱ}} = N_{\text{ԸԱ}} \times C_1 \times C_2 \times C_n,$$

որտեղ՝

$Q_{\text{ԸԱ}}$ - գնահատվող գույքի շուկայական արժեքն է

$N_{\text{ԸԱ}}$ - նմանատիպ միավորի շուկայական արժեքն է

C - շտկման գործակիցներն են

Գնահատման այս մեթոդի կիրառման նպատակով մեր մասնագետների կողմից կատարվել է նմանատիպ տրանսպորտային միջոցների վաճառքների տվյալների ուսումնասիրություն: Ստորև (աղյուսակ 1) ներկայացված են փաստացի վաճառված և վաճառքի դրված տրանսպորտային միջոցների տվյալները (հղումը աղբյուրին՝ սեփական տեղեկատվություն, Էրեբունի համայնքում տեղակայված ավտոշուկայի առաջարկի տվյալներ, www.list.am, www.auto.am, «ԱվտոշուկաTV» հեռուստահաղորդում):

Աղյուսակ 1

N	Տրանսպորտային միջոցի անվանումը	Թողարկման տարեթիվը	Վազքը ԿՄ	ինֆորմացիա	Տեխ. վիճակը	Շուկայական արժեք (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6	7
1.	VAZ 21213	1990	120.000	list.am/item/10559614	3	1 115 500
2.	VAZ 2121	1991	100.000	list.am/item/10961935	2	874 800
3.	VAZ 2121	1990	250.000	list.am/item/10626045	2	777 600

Իր տեխնիկական տվյալներով գնահատվող գույքին ավելի համադրելի է աղյուսակում բերված երրորդ տվյալը:

Գնահատվող գույքի արժեքի հաշվարկը շտկման գործակիցների միջոցով բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Կիրառվող հիմնական գործոնները	Գնահատվող օբյեկտ	օբյեկտ անալոզ N1	օբյեկտ անալոզ N2	օբյեկտ անալոզ N3
Ավտոմեքենայի մակնիշը	VAZ 21213	VAZ 21213	VAZ 2121	VAZ 2121
Վաճառքի գինը (Դրամ)		1 115 500	874 800	777 600
Ուղղումը (%)		-5%	-5%	-5%
Ուղղումը (դրամ)		-55 775	-43 740	-38 880
Ուղղված գինը (դրամ)		1 059 725	831 060	738 720
Փոխանցման տուփը	մեխանիկական	մեխանիկական	մեխանիկական	մեխանիկական
Ուղղումը (%)		0%	0%	0%
Ուղղումը (դրամ)		0	0	0
Ուղղված գինը (դրամ)		1 059 725	831 060	738 720
Տարեթիվը	1988	1990	1991	1990
Ուղղումը (%)		-10%	-15%	-10%
Ուղղումը (դրամ)		-105 972	-124 659	-73 872
Ուղղված գինը (դրամ)		953 752	706 401	664 848
Վիճակը	բավ	լավ	լավ	լավ

Ուղղումը (%)		-10%	-10%	-10%
Ուղղումը (դրամ)		-95 375	-70 640	-66 484
Ուղղված գինը (դրամ)		858 377	635 760	598 363
Այլ գործոններ		–	–	–
Ուղղումը (%)		-20%	-20%	-20%
Ուղղումը (դրամ)		-171 677	-127 160	-119 663
Ուղղված գինը (դրամ)		686 700	508 600	478 700
Գնահատվող գույքի արժեքը	558 000			

Արդյունքում ստացանք VAZ 21213 ավտոմեքենայի արժեքը ստացանք **558 000**
կամ կլորացված՝ **560.000** ՀՀ դրամ:

N	Տրանսպորտային միջոցի անվանումը	Թողարկման տարեթիվը	Վազքը ՀՄ	Ինֆորմացիա	Տեխ. վիճակը	Շուկայական արժեք (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6	7
1.	PAZ 3205	2003	202.000	auto.am/offer/2004931	4	2 041 200
2.	PAZ 3205	2005	49500	auto.am/offer/1898370	4	1 944 000
3.	PAZ 3205	2006	35000	auto.am/offer/2051899	4	1 944 000

Իր տեխնիկական տվյալներով գնահատվող գույքին ավելի համադրելի է աղյուսակում բերված երրորդ տվյալը:

Կիրառվող հիմնական գործոնները	Գնահատվող օբյեկտ	օբյեկտ անալոզ N1	օբյեկտ անալոզ N2	օբյեկտ անալոզ N3
Ավտոմեքենայի մակնիշը	PAZ 3205	PAZ 3205	PAZ 3205	PAZ 3205
Վաճառքի գինը (Դրամ)		2 041 200	1 944 000	1 944 000
Ուղղումը (%)		-5%	-5%	-5%
Ուղղումը (դրամ)		-102 060	-97 200	-97 200
Ուղղված գինը (դրամ)		1 939 140	1 846 800	1 846 800
Փոխանցման տուփը	մեխանիկական	մեխանիկական	մեխանիկական	մեխանիկական
Ուղղումը (%)		0%	0%	0%
Ուղղումը (դրամ)		0	0	0
Ուղղված գինը(դրամ)		1 939 140	1 846 800	1 846 800
Տարեթիվը	2001	2003	2005	2006
Ուղղումը (%)		-20%	-35%	-40%
Ուղղումը (դրամ)		-387 828	-646 380	-738 720
Ուղղված գինը (դրամ)		1 551 312	1 200 420	1 108 080
Վիճակը	բավ	լավ	լավ	լավ
Ուղղումը (%)		-10%	-10%	-10%
Ուղղումը (դրամ)		-155 130	-120 000	-110 800
Ուղղված գինը (դրամ)		1 396 182	1 080 420	997 280
Այլ գործոններ		–	–	–
Ուղղումը (%)		-20%	-20%	-20%
Ուղղումը (դրամ)		-279 237	-216 120	-119 480



Ուղղված գինը (դրամ)	1 116 945	864 300	797 800
Գնահատվող գույքի արժեքը	926 348		

Արդյունքում ստացանք PAZ 3205 ավտոմեքենայի արժեքը ստացանք **926 348** կամ կլորացված՝ **930.000** ՀՀ դրամ:

ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ ԵՎ ԱՍՓՈՓՈՒՄ

Գնահատվող շարժական գույքի շուկայական արժեքի հաշվարկման համար մեր կողմից կիրառվեց գնահատման համեմատական մեթոդը, համաձայն որի ստացանք հետևյալ արդյունքները.
 - **Համեմատական մեթոդ 560.000ՀՀ դրամ ՎԱ221213 մակնիշի 437ՕՄ61 պետհամարանիշով ավտոմեքենա**
 - **Համեմատական մեթոդ 930.000ՀՀ դրամ ՊԱ23205 մակնիշի 266ՕՄ61 պետհամարանիշով ավտոտրուս**

Մեր մասնագիտական կարծիքով դիտարկվող շարժական գույքը իրացվելիության վեց աստիճան (0-5) սանդղակում համապատասխանում է երկրորդ աստիճանին:

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հատուկ պայմանները հանդիսանում են սույն եզրակացության անքակտելի մասը.

1. Սույն եզրակացությունը վավեր է միայն ամբողջությամբ ներկայացված և միայն նշված նպատակի համաձայն:
2. Գնահատման համար տրամադրված և եզրակացության մեջ արտացոլված տեղեկությունները համարվում են հավաստի, սակայն գնահատողը չի կարող երաշխավորել վերոհիշյալ տվյալների բացարձակ ճշտությունը:
3. Գնահատողը գործել է, որպես անկախ կատարող:
4. Գնահատվող առարկայի վերաբերյալ գնահատողի կարծիքը վավեր է միայն գնահատման օրվա դրությամբ:
5. Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են:
6. Գնահատման արդյունքները ունեն խորհրդատվական բնույթ:
7. Գնահատողի կողմից կատարված աշխատանքի արդյունքների իսկությունը հիմնված է նրա աշխատանքային փորձի և մատչելի տեղեկատվության վրա:
8. Սույն գնահատման եզրակացությունը պարունակում է գնահատողի մասնագիտական կարծիքը գնահատվող առարկայի վերաբերյալ:
9. Գնահատողի կատարված աշխատանքի վարձատրությունը կապված չէ գնահատման արդյունքի և եզրակացության հետ:
10. Սույն եզրակացությունը հանդիսանում է «Օրրան» ընկերության արտադրանքը և իր մեջ ներառում է առևտրային գաղտնիք, որը ենթակա չէ հրապարակման:
11. Սույն եզրակացությունը կազմված է յոթ համարակալված էջերից:
12. Սույն հաշվետվության պատճեն չի կարող ծառայել որպես փաստաթուղթ:
13. Գնահատման հաշվետվությունը չի հանդիսանում երաշխիք, որ այն կվաճառվի ազատ շուկայում սույն հաշվետվության մեջ նշված արժեքին հավասար գնով:
14. Գնահատվող գույքը գնահատողի կողմից կատարվում է տեսողական զննությամբ և գնահատողը պատասխանատու չէ գնահատվող գույքի թաքնված բնութագրիչների և թերությունների համար:

Գնահատող

**Հաստատում եմ՝
«Օրրան» ՍՊԸ տնօրեն**



Հ. Խալաթյան

Մ. Մարիբեկյան